

ՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшахъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1899 ԹԻԱԿԱՆԻ

ՄԱՐՏ

(27-րդ ՏԱՐԻ)

ՊՐԵՍԻՏԱՆԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

ՄԱՐՏԱԿԸ, ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՐՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մ» շաբաթը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍՍՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ երկու և մի քառասունը ամսականը՝ 6 ռուբլի. Եւրոպայի քառասունը ամսականը՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի քառասունը ամսականը՝ 10 ռուբլի:

«ՄԱՐՏԱԿԻՆ» գրվել է կարելի է ի ՄԱՐՏԱԿԱՆՈՒՄ (Բաղրամյան և Բարսեղյան փողոցների անկիւնը):

Կարողութեան ուրիշ քաղաքներից «ՄԱՐՏԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАХЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ միջոցի դիմել. ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Նամակ Բագրուից. Նամակ Խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մակեդոնիա և Ռուսաստան. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աղա բժիշկը:

ԻՆՉ ՄԻՋՈՑԻ ԴԻՄԵԼ

Անդրկովկասի գանազան կողմերից եկած գիւղացիները ներկայումս պտտում են Թիֆլիսի գիւղատեղիներում, բաղնիքով բոլոր այն գետերը, որտեղից յոյս ունեն որ և է օգնութիւն ստանալու իրանց հողերի վերաբերութեամբ: Թէ գրաւոր և թէ բերանալի կերպով արտայայտած բազմաթիւ լրքն գիրքներում գիւղացիները գանազանում են իրանց սակաւահողութեան վրա և աղերսում են աւելացնել հողեր իրանց գիւղացիներին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Պ Ա Բ Ժ Ի Շ Կ Ը

(Պատկեր)

Գիւղում տիֆլիսում էր դրել և աջ ու ձախ անդրադարձաւ կողմերում էր: Տունը չէր կար, որ հիւանդ չունենար. մարդ չէր կար, որ սիրտը ուրախ, աչքը ցածր լինէր: Այլ բարով բարեկենդան օրեր էին (գնաց և յետ չէր գալ այն տեսակ բարեկենդան): Ներսիսապետները ուրախ կրկնէին փոխարէն՝ ամեն կողմից լսվում էին պառաւանքները սրտամաշ բաշաթիւնները. դափ ու զուռնի փոխարէն՝ ողբացող մանուկների յուսափառ զուռնի-գոչիւններ: Սուգը ընդհանուր էր: Փողոցներում կենդանութեան նշան չէր երևում. միայն երբեմն նկատվում էր տեղերից ու թոյն կերպարները, որը ընկ տակ, կասես ակամայ, մրմնջում էր ինչ որ տխուր մեղեդի. նրան հետևում էին մի զաւթալ և մի քանի մուսլիմ գեղեր, որոնք սուս ու փուս, գլխակոբ, ստուերի պէս սահում, անցնում էին դէպի գերեզմանատուն...
Բնութիւնը էլ կատարելապէս համակերպվել էր մարդկանց տրամադրութեանը: Գիւղացիները վազող շարժման գետակը, որը սովոր էր միշտ

կան հողին, կամ հաստատել իրանց վրա մշտապէս պետական հողերի կապանքը և կամ վերջապէս տալ իրանց նոր գիւղ և բնակութիւն գեղելու համար որոշ ազատ պետական հողեր: Գիւղացիների այդ գանազանները և խնդիրները բոլորովին բնական են և հասկանալի: Ազգաբնակչութիւնը օր օրի վրա աւելանում է, իսկ գիւղական հողը մնում է նոյնը, որը մի և նոյն ժամանակ աւելի էլ է արդիւնաբերում, ուժասպառ լինելու պատճառով:
Սակայն, մենք կարծում ենք, որ գիւղացիները դրական հետեւների հասնելու համար պէտք է թողնեն այն աւանդական ձևեր, որին նրանք մինչև այժմ հետեւել են այդպիսի դէպքերում և դիմեն իրանց անտեսութիւնը բարեօրէն ու նոր միջոցներին: Մինչև այժմ գիւղացին, հենց որ տեսնում էր հողը պակասեց կամ նուազեցրեց իր արդիւնաբերութիւնը, իսկոյն դիմում էր իշխանութեան, խնդրելով աւելացնել

ծիւղկոտ դժմով, ուրախ կշիռնով դիմաւորել ջուր վերցնող երիտասարդ աղջիկներին ու հարսնեքին, այժմ, կարծես, ձայնակցում էր նրանց տխուր բայաթիւններին: Գետակի կողքին շարված ուռնիները կասես լալիս էին, թեթիւ կերպով տատանելով գլուխները: Մտերմ այլ ևս չէին ծղվում: Նրանք միմեկին էր, արեւ՝ փախել: Ամեն ոք, ամեն ինչ գիւղում տխուր ու սգաւոր էր: Թշուառութեան մէջ թաղված անօգնական ժողովուրդը տանջվում, լալիս և փառք էր տալիս իր Ստեղծողին...

Գաւառական իշխանութիւնը տեղեկութիւն ստացաւ հիւանդութեան մասին և շտապեց բժիշկ ուղարկել աղէտի տեղը:

Դարբնենց հացատունը շատ տխուր տպաւորութիւն էր թողնում մտնողի վրա: Սև առաստաղի տակ, սև սիւնների մէջտեղում դրված ու կարպետով ծածկված բուրձու կողքերին կծկված էին չորս կիսակենդան արարածներ՝ ընտանիքի հայրը իր ամուսնուով և երկու աղջիկներով: Հիւանդները գլխավերեւ նստած էր մի սևադեղնու պառաւ. դա տան քօթ ու կն էր, մեծ մայրը, որը ամենայն անձնութեամբ գիշեր ու ցերեկ հսկում ու խնամում էր իր բազրի «բալաններին»: Խեղճ պառաւը բանի արթնում էր՝ սև գոգնուցը աչքերին դրած՝ խաչաձայնով անդադար բայաթի էր մրմնջում, մինչև որ ձայնը փոքր առ փոքր նուազում և իսպառ կտրվում էր: Այն ժամանակ պառաւը նստած

հող և շատ անգամ էլ ստանում էր բաւարարութիւն լայնատարած ազատ հողերից, որ գոյութիւն ունէին: Իսկ այժմ հանգամանքները փոխվել են: Ազատ հողերի տարածութիւնը գրաւի կերպով պակասել է և եղածներն էլ վաճառված է պահպանել յատուկ նպատակների համար: Ուստի պէտք է այժմ ուշք դարձնել եղած հողաբաժնի վրա և աշխատել մի շարք կատարելագործութիւնների միջոցով դարձնել նրան աւելի արդիւնաբեր և շահաւէտ: Դա այն ընդհանուր միջոցն է, որին պէտք է դիմեն մեր բազմաթիւ գիւղերը, որպէս զի իրանցից հեռացնեն տնտեսական ձգնաժամը արհաւիրքները, որոնք առաջ կը դան, եթէ ներկայ անհոգութիւնը շարունակվի երկար ժամանակ: Բայց կայ և մասնաւոր մի միջոց, որին անպատճառ պէտք է դիմեն բոլոր այն գիւղերը, որոնք ունեն յարմարութիւն: Դա մասնաւոր հողերի գնելն է: Այն գիւղերը, որոնց մօտեցնում կան մասնաւոր սեփականութիւններ, կարող են գնել այդ հողերը և այնտեղ սկսել նոր տնտեսութիւն: Այդպիսի հողեր շատ կան մեր երկրում և բազմաթիւ գիւղեր կարող են նրանց շնորհիւ երկար ժամանակ ապահովել իրանց կարիքները: Գիւղական համայնքների կողմից հող գնելուն նպատակով և կառավարութիւնը, որը Ռուսաստանի ներքին նահանգներում այդ նպատակով հաստատել է նոյն իսկ յատուկ մի բանկ, որին տուել է «գիւղական բանկ» անունը:
Հողը մեր երկրում սկսել է սաստիկ թանկանալ և ոչ ոք չէր պէտք է երկիւղէր, որ նա հող գնելուց կը վնասվի: Գիւղական համայնքները պէտք է հասկանան, որ եթէ նրանք այսօր իրանց չեն գնեն այդ հողերը, փայլ նրանք պէտք է ստիպված վերցնեն այդ հողերը մասնաւոր անձերից ամենաբաժուար պայմաններով: Այն գիւղերը, որոնք հող են գնել, ինչպէս, օրինակ, մօթականների Վօրոնցովկա գիւղը, հայ կաթօրիկների Շահնազար գիւղը և ուրիշներ, անշափ գոհ են իրանց վիճակից և օր օրի վրա աւելի և աւելի են համոզվում, որ նրանք հաստատ գործի են ձեռնարկել: Մեր երկրի ազգաբնակչութեան մի խոշոր մասը, լինի դա ռուս, հայ, վրացի, թուրք, կարող է մասնաւոր հողեր գնելով աւելացնել մշակվող հողերի տարածութիւնը և այդպիսով թեթեւաց

տեղը ննջում էր և միշտ սարսափելի երազներ տեսնում: Իրանդի հառաչանքը նրան արթնացնում էր: «Ձան, բալա ջան», պատասխանում էր նա ծանր տեղեցին և նրա չրթուները էլի մրմնջում էին մի ինչ որ բան: Աղօթք էր դա թէ բայաթի՝ չէր դիմում: Պառաւից ընդհանուր մէջը սիրին տուած նստել և տխուր մտածմունքի մէջ էր ընկել տանտիրոջ մեծ եղբայրը՝ Միխայիլը, որը նոյնպէս հիւանդապահի դեր էր կատարում: Տունը նեղ էր և օստիկ խոնավ ամեն անկիւնում կատարելապէս թագաւորում էր աղբատութիւնը անմաքրութեան հետ միասին, թանձր գարշահոտութիւնը, որ լցրել էր ամբողջ տունը, արդեւում էր մարդու շնչառութիւնը:
Տան դուռը մի անախորժ ձեռնոց արձակեց և ուժով բացվեց: Եւթի վրա երևաց մի բարձրահասակ, յաղթանալով, սիրունատես մարդ. դա բժիշկն էր: Գուռը բանալով՝ նա չէմբել վրա կանգ առաւ, ղեմքը խոժոռեց, ժէնեբը հաւաքեց, ընթել թաշկինակով բռնեց և սկսեց գոռալ:
— Այն ինչ կեղտոտութիւն, ինչ խոնավութիւն, ինչ գարշահոտութիւն է խոլի բռն է, ինչ է: Ինչպէս կարելի է այս դժոխքում չորս հողի հիւանդ պահել, չէ որ սրանք բոլորն էլ այստեղ կը ջարդվեն:
Խեղճ Միխայիլ բժիշկը ձայնը լսելու պէս յանկարծ տեղից վեր թռաւ և սկսեց շուարած նա

նել այն ծանր վիճակը, որ զգացվում է ներկայումս սակաւահողութեան պատճառով:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Մօտ երեք ամսից յետոյ, մայիսի 26-ին, Ռուսաստանը մի մեծ գրական տօն կը կատարէ: Մինչև այժմ մենք բաւական տեղեկութիւններ ենք հաղորդել ծրագրված պատրաստութիւնների մասին և ընթերցողները կարող են մի թեթիւ հասկացողութիւն կազմել թէ ինչ պիտի լինի Պուշկինի ծննդեան հարեւրամակի տօնը: Ինքը, մեծ բանաստեղծը, մի օտանաւորի մէջ սասել է, որ Ռուսաստանի մէջ ապրող բոլոր ազգերը կը ծանաչեն նրան: Եւ դա ճիշդ է. չը կայ ամբողջ Ռուսաստանում մի հատ գրագէտ, որ չիմանայ Պուշկինի անունը, անգոր չասէ նրա բանաստեղծութիւններից մէկը: Գրականութեանը, ազգերը միացնող այդ մեծ ուժը, իր տաղանդաւոր ներկայացուցիչների անունները հաւասարաչափ սրբելի է դարձնում բոլոր ազգերի համար. նա ստեղծում է մի փառք, որ մի երկրի, մի ցեղի մէջ չէ սահմանափակվում, այլ ընդհանուր է մարդկութեան համար: Այդպէս է և Պուշկին: Եթէ նա մի աշխարհաշուակ հանձնար չէ և չէ կարող լինելու, Գոթթէին նման լինել, բայց դոնէ լայնատարած Ռուսաստանում միանման սրբելի է ոչ միայն օրոքաց աղբիւր, այլ և այն բոլոր ցեղերին ու լեզուներին, որոնք մասնակից են Ռուսաստանի մասւոր կեանքին: Ուստի մայիսի 26-ի տօնը մի գեղեցիկ տօն է ամբողջ Ռուսաստանի համար, առանց խորթութեան կրօնի և ազգութեան: Առանձնապէս Պուշկինը պիտի սրբելի լինի մանաւանդ Վովկասում, որի բնութիւնը, պատմութիւնը, աւանդութիւնները նրա բանաստեղծութիւնների մէջ մեծ տեղ են զբաղեցնում: Նրանք մեր երկրի, մեր բնութիւնն ու բարքը, Պուշկինը մեծ ծառայութիւն է մատուցել: Դիշդ է նկատում «ՆԱԵՐԱՅ» լրագիրը, որ շնորհիւ Պուշկինի, Ռուսաստանի մէջ կրթութիւն ստացող մանուկը առաջին իսկ քայլերից լցվում է մի բուռն համակրութեամբ դէպի Վովկասը: Պուշկինի հարեւրամակը, իբրեւ երախտագիտութեան մի նշան, անշուշտ արժանաւոր կերպով կը տօնվի և մեր մէջ, և արդէն լինում են պատրաստութիւնները: Լրագիրը ասում է.

Պուշկինի իրեղանքով տողորված մարդը ամեն ժամանակ կը պաշտպանէ արգարին և թոյլին, միշտ հակառակ կը լինի, որ կենդանի կեանքին ձեռնապահ կերպով վերաբերվեն:

յիւ նրա երեսին: Միմասը լսել էր, որ բժիշկ է եկել գիւղը և տանտեղին խնդրել էր, որ անպատճառ իրանց տունն էլ բերէ: Նա շատ մեծ յոյս ունէր բժիշկի վրա և անհամբեր սպասում էր նրա գալուն: Նա կարծում էր, որ բժիշկը կը գալ, իր քաղցր կարմունքով, իր բարի խորանքով, իր զեղ ու զարմանով հիւանդների ցաւը կը բժշկէ և նրանց տիրոջ սիրտը կը մխիթարէ ու կը յուսադրէ: Իսկ այժմ... Տէր Աստուած, դեռ ոտը չէմբել ներս չէ դրել, սկսում է հայհոյանք ու նախատինք թափել, թշուառ մարդկանց վիրաւոր սիրտը նորից խոցոտել... Դեռ մի շաբաթ չը կայ, որ այդ գոնից երկու սրբելի գրականներ են դուրս գնացել, անտանելի կակիծ պատճառելով մնացողներին սրտին, և հիմա էլ բժիշկի նման հեղինակաւոր մարդը բացարձակ յայտնում է, թէ մնացող չորս հողին էլ պիտի ջարդվեն... Օ՛, որքան անիրաւ, որքան բարասիրտ մարդիկ կան աշխարհիս երեսին...

Բժիշկի կողմից վարժուցիչ այն աստիճան վըռտաբերց Միխայիլ, որ վերջինը անպատճառ նրա կռնից կը բռնէր և դուրս կը հանէր տանից, եթէ հետեւեալից չը վախենար. բայց նա բաւականացաւ միայն մարդու անիծելով «անաստուած» մարդկանց: Բժիշկը մի ընչ առաջ անպառնջ հիւանդի անունները մի-մի գրեց, հարցրեց, թէ ո՞րքան ժամանակ է բռնված և ապա սկսեց անկազմեղի զուլանքով ըննել նրանց: Երբ զարկեցին էր բռնում, որի ձեռքն էր

նա անպատճառ ընդունակ կը դառնայ հասկանալու ոչ միայն օտարի խելքը, այլ և նրա սիրտը:

Այդպէս պիտի լինի և այդպէս է մասամբ: Տարբարաբար, իրենց հետեւ, մեծ ուսուցիչները յիշատակում են միայն տոների ժամանակ, իսկ առօրեայ կեանքի մէջ նրանք ժողոված են: Բանաստեղծութիւնը, օրինակ, մշտական ոգևորութեան աղբիւր է գտնուած եղբայրասիրութեան, մարդկայնութեան գաղափարի մէջ: Նա մաքուր զգացմունքներն է երգում, սէր, խաղաղութիւն, հաշտութիւն է մեծարում, աստուածացնում: Բայց նրանք միշտ լսում են: Մի կողմ թողնելով հասարակ մանկանացունքներն, որոնք երգեր հիւսել չէ գիտենք, եթէ նրանք բուսական յափշտակութեամբ ըմբռնուած իրենց հայրենիքի, կրթութիւնի և արատների մէջ, այդ դեռ մասամբ ներքի է: Բայց ինչ ասենք, երբ իրանք, բանաստեղծները չեն անում այն, ինչ իրանք են երգում: Գեռ մինչև այժմ բանաստեղծութեան մէջ չէ եղել մէկը, որ իրենց զարնէր չարամիտ բանասիրութիւնը, մարդատեսութիւնը: Գեռ չէ եղել մի ընտր, որի ձայներն ականջ դնելիս մարդը իր նմանին պատուելու, անխիղճ կերպով ցնխոտելու ցանկութիւն զգար: Բանաստեղծն (ժողովական) է սովորեցրել մեզ, որ բոլոր անունների մէջ ամենասուրբը—մարդն է: Եւ սակայն մեր ժամանակը այնքան հակաբանաստեղծական, այսինքն հակաիրէալական է, որ նոյն իսկ սէր և վեհութիւն քարոզող բանաստեղծներն անգամ մի ձեռքով ջնջում են այն, ինչ գրում են միւս ձեռքով: Այդպիսի մի ժամանակ մանաւանդ անհասանելի բարձր են երևում այն իսկական մեծ սրտերը, որոնք բանաստեղծ, իրենց իրենց ծնունդով, բանաստեղծ մնացին մինչև իրանց կեանքի վերջը և թողնելով մեզ իրանց երգածը ոչ իբրև շինուած աւանդ, այլ իբրև սրտի խորքից բխած մի աստուածային կոտակ, իբրև իրանց մարդասէր հոգու մի ժամանակ: Պաշտօնը այդպիսի աւանդատու էր. և հենց այդ պատճառով է, որ նրան մեծարում է մի անպակաս երկիր իր բազմաթիւն աղբյուրակալութեամբ:

*

Սուրբ հակադրութիւնները իրանց համար մի փայլ, մի ժամանակաւոր յաղթութեան գործը դարձնողները տարածված են աշխարհի բոլոր կողմերում: Փարիսիսիւթիւնը համաշխարհային երևոյթ է: Այն ժամանակից, երբ ռուսաց արտաքին գործերի մինիստրը պետութիւններին առաջարկեց զինաթափութիւն, անգլիացի յայտնի հրապարակախօս և հրատարակիչ Ստէֆ Կլեյնը մի եւանդուն գործունէութիւն: Նա ճանապարհորդեց Ռուսաստան, Սերպայի միւս կողմերը, կամենալով ամեն տեղ ժողովրդականացնել այդ գաղափարը: Անգլիայում նա ջանք գործ դրեց, որ մի «խաչակրաց արշաւանք» սկսէ պատերազմի դէմ, ժողովներ կազմեց, հիմնեց «Պատերազմ պատերազմի դէմ» անունով մի լրատվական: Ըստ երևոյթի, դրանք իրենց իրենց վաղ գործունէութիւնը Մի օգնութիւն: Ստէֆ փարիսիսիւթեան մի տիպար է. նա զեղեցիկ գաղափարներն ու մաքուր հասկացողութիւնները շահագործելով է ուզում յայտնի դառնալ, կարելի երա տեսնել և այդ պատճառով ըստէնք օնի նման փոփոխում է իր գոյնը:

չօչափում, որի կողմն էր մատով լրելակիւն կացնում:

Սեպտեմբեր պատերազմ, որ նորեկի մաշկը դէմքից և գոտեգոտից սատարի վախեցած՝ մեռելի գոյն և անպարկէ ձե էր ընդունել ու պատին յենվելով հազիւ էր կարողանում ոտի վրա կանգնել, այժմ հասկանալով նրա ու լինելը, դողդողալով առաջ շարժվեց և չընկելով բռնի ոտների մօտ, սկսեց աղբիւր:

—Աղա-ջան, ոտներդ մեռնեմ, գլխովդ պտտվեմ, բալաներդ մատաղ լինեմ, աղաչում եմ, մի ճար, մի օգնութիւն արա իմ զաւակներին, նրանց էս նեղ տեղից ազատիր... յոյս ու ապաւէնս վերս Աստուած է մնացել, ներքե՛լ դու ձեռք քո փէշն եմ ցցել, մի ձեռք... —

Աղա բռնիկը զգուշացնելով նրան մի կողմը հրեց և հանգստութեամբ շարունակեց իր գործը: Բոլոր հիւանդներին ընկնելուց յետոյ՝ նա դարձաւ Միսասին և հարցրեց.

—Ի՞նչ են ուտում սրանք:

—Ինչ կայ, որ ինչ ուտեն, աղա,—պատասխանեց Միսասը տխրութեամբ.—թէ ուտիս է լինում՝ հաց, շուշ, թանգսպաս. թէ պատ է լինում՝ ընդ, զոն *), լոբի... —

—Գովելի ես, ինչ է, Միսասի խօսքը կտրեց բռնիկը աչքերը չռելով.—միթէ կարելի է այդպիսի բաներով հիւանդներին կերակրել:

* *) Կեղեք և զրեք ըստեր են, որոնց աղաչել մէջ պահում է կեղեքի տեղ են գործածում:

Անգլիական հասարակութեան մեծամասնութիւնը—գրում է «Сынъ Отечества» լրագրի թղթակիցը Լոնդոնից—խոստովում է այդ շարժումից, որովհետև նա չէ հաւատում գրեթէ կանգնած անձնաւորութիւններին: Չէր կայ աւելի ծանր տեսարան, քան երբ սուրբ և մեծ գործի զեկը առնում են այնպիսի մարդիկ, որոնց խօսքը և գործը համապատասխան չեն: Ստէֆ ջեքը կերպով պաշտպանում էր Ջեյմսի աւաղակային արշաւանքը դէպի բոհեմերի երկիրը, նա գովաբանում է Անգլիայի նուաճողական բաղաձայնութիւնը, ամեն մի նոր երկիր ձեռք բերելու: St. James Hall-ի միտինգի ժամանակ նա, խօսելով հայկական կոտորածների մասին, պահանջում էր ոչ թէ հայ ժողովրդի ազատութիւնը, այլ որ Անգլիան վրէժ անէ քրիստոնեաների թափած արեան փոխարէն: Սե Նա այժմ խաղաղութեան շարժման գլուխն է: Նրան չեն հաւատում, որովհետև նա ջինգոյի ծայրայեղ տիպն է և ամենասուրբաբար լիմպերալիստ:

Մարդկային ընտրութեան մէջ կայ այդ կեղծոտ գիծը—սիրամարգի փետուրներով դարձրել սուրբաբար և իսաւր հոգին Փետուրները խաբուել են լինում անպատրաստ հասարակութիւնների համար: Գոյնեղ ամենից շատ երեսներն են վայրենիքներն են շլացնում: Բայց այնպիսի հասարակութիւններ, որոնք գիտեն ճանաչել, ընկնել, վերլուծել, միայն արհամարհել կարող են արտաքուստ պնդված խաբեւանքներն: Այդպէս է անգլիական հասարակութիւնը: Եւ որքան շատ բարեկէ կայ այդ գիտակցութեան, այդ հմտութեան մէջ...

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻԹ

Մարտի 1-ին

Բագու բաղաձայն, ինչպէս բոլորին յայտնի է, շատ արագ կերպով է հարստանում և որքան հարստանում են բաղաձայնները, այնքան էլ նկատելի կերպով կարծես սառչում են նրանց զգացմունքները դէպի չքաւորները և թշուառները: Գրանք գլխի ու ցեղեկ միայն մտածում են, որ մէկը միւսից աւելի չեղ կերպով զարդարեն իրանց անքան կահ-կարասիներով և թափաղակներով հագուստներով դուրս գան մանգալու, իսկ բարեգործութիւն միայն անում են այն դէպքերում, երբ, ի ցոյց մարդկանց, կարելի է գովասանքներ արժանանալ լրագրիչներում, բայց ծածկաբար մէկ կօպէկ անգամ մէկ աղքատի ձեռքը չեն դնի: Կրթական և տնտեսական կեցողութիւնը լի է մեղքի ու սոված աղքատներով, գրկած իրանց կրտսերիկ մանուկները, նրանք լացով, աղաչանքով խնդրում են անցողիկ օգնութիւն, բայց չեղ ու չտալ հաղնվածները կարծես չեն տեսնում այդ թշուառներին ու առանց ուշադրութիւն դարձնելու հեռանում են և մինչև անգամ ծաղրում են աղքատներին:

Անցեալ տարիներում, երբ այստեղի աղքատացում կային 500 հոգի գաղթականներ, բաւական ուշադրել էին թաղաքացիները դէպի նրանց, բայց նրանք գնացին և այլ եւ ոչ չէ մտածում այնտեղ մնացածների համար: Ինքն այժմեան աղքատները աղքատ չեն, որ ոչ մի օգնութիւն չեն հասցնում խեղճներին:

Այս րօպէին աղքատացում, 150 հոգու մէջ կան տկարներ, որոնք առանց որ և է բժշկական օգնութեան ընկած են, կան անդամաւորյծներ, կոյրեր, կաղեր և հոգեկան հիւանդներ, կան այ-

—Ապա ինչով կերակրենք, աղա-ջան, ուրիշ բան չունենք, աղքատ մարդիկ ենք, մեր տան գոնոված էլ այդ է:

—Ինչով,—վրա բերեց բռնիկը, առանց Միսասի վերջին խօսքերին ուշադրութիւն դարձնելու,—այ, ասեմ, առաւօտ—իրիկուն երկ-երկու բաժակ թէ՛ կաթով, կոնեակով, կամ հին գլիւնով, ճաշին ճուտով չորով և դառն մսից կօտլետներ, իրիկունը... —

—Լա ես ասում, աղա-ջան, համա թէյ ու շաքար, կանխակն ու հին գլիւն, ճուտ ու գառն միւսը մեզ ով է տուել:

—Չունես, առ, ով է մեղաւոր, կրկին գոռաց բռնիկը:

—Եւ, ինչով առնեմ,—ասաց Միսասը, խոր հոգոց քաշելով և նրա աչքերը ջրակալեցին,—չեմ տեսնում մեր օրն ու ապրուստը:

Բայց բռնիկը այլ ևս Միսասի խօսքերը չէր լսում. նա թղթի կտորներով վրա արագ-արագ ինչ որ բան էր գրում. երբ գրեց վերջացրեց, նա թղթի կտորները մեկնեց Միսասին ու ասաց.

—Այս թղթերը էդուց անպատճառ կը հասցնես քաղաք և այնտեղից կը բերես սրանց մէջ նշանակված դեղերը. նրանք շատ թանկ չեն նստի, ընդամենը հինգ րուբլի հազիւ արժենան: Միտնեմք նա երկար բացատրում էր, թէ որ դեղը ում պէտք է տալ և ինչպէս պիտի գործադրել. բայց Միսասը այլ ևս նրա խրատները

րի կանայք իրանց որբերով, որոնք միանգամայն անկարող են աշխատանքի գնալ և սեփական աշխատանքով ապրել: Այդ անմխիթար թշուառները ձրի ստանում են միայն աղքատացողի սառն և դատարկ սենեակները, բայց թէ ինչով տաքացնեն սենեակները, ինչով յաղեցնեն իրանց քաղցածութիւնը, այդ մասին պէտք է մեր յարգելի բաղաձայններին հարցնել: Բագուի պէս հարուստ քաղաքի համար ամօթ է մի այսպիսի աղքատացող ունենալ:

Ի նկատի առնելով աղքատների այս անլինամ գրութիւնը, չենք կարող չնորհակալութիւն չը յայտնել պ. Աստուածատուր Կաճկաճեանին, որ միշտ ուշադրութիւն է դարձնում աղքատացողի վրա: Կարող ենք ասել, որ այդտեղ ապաստանած 150 հոգի թէ տեղացի և թէ դա՛նազան կողմերից հաւաքված աղքատները միութեամբ են միմիայն պ. Կաճկաճեանցի հասցրած օգնութեամբ և քաղաքական խօսքերով:

ձ. Յ.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 3-ին

Թիֆլիսի Աւետեաց եկեղեցու ծխականները անցած փետրվարի 21-ին հրաւեր էին ստացել ներկայ լինել նոյն օրվայ ժողովին՝ նոր երէց-փոխ ընտրելու համար:

Կազմված ցուցակից յայտնվեց՝ որ ներկայ են 49 ծխական, մօտ 700 տնից, որոնք գրված են այդ եկեղեցու վրա: Ասել է ներկայ էին 70%: Հարկից 7 հոգի միայն: Պատճառ չը ընկնել, թէ ինչին է այդ թիւ այդ խոշոր պակասութիւնը: Վեկավարում էր փոխստորավարի կողմից՝ որպէս նախագահ՝ գործակալ ըստանալ: Սա կարելի է գտնում ընտրութիւն անել և ընտրողներ կատարում են գործը: 16 ձայն ստանալու առաջին ընտրելին միւսները աւելի պակաս: Ոչ ոք, ուրեմն, ընտրված չէ, թէ ևս նախագահը համարում էր թէ ըստ սովորութեան պէտք է ընտրված ճանաչել շատ ձայն ստացողին, իսկ նրա հրամարման դէպքում՝ յաջորդին: Այդ կարգը ընդունելի չեղաւ: Այն ժամանակ նախագահը յայտարարեց, թէ ինքը կատարված էր հասցնել ի գիտութիւն փոխստորավարի և կը սպասէ նոր հրահանգի և կարգադրութեան:

Փետրվարի 23-ին, բուն քաղաքից անդի իրանք օրը, նորից ժողով է եղել նոյն եկեղեցու ներկայութեամբ 33 ծխականներ և ընտրութիւնը կատարել պրծել են Այս անգամ աւելորդ էին համարել ծանուցագրեր ուղարկել ծխականներին:

Այդպիսի ընտրութիւնները լրջութիւնից գուրկ են: Նրանք արտաքին զեկավարող իշխանութեանը, իսկ ընտրողական սկզբունքը դրահատել լիմացող մարդն էլ հազիւ թէ յօժարի այդպիսի ընտրութեամբ իրան ներկայացուցիչ համարել հասարակութեան:

Միսական

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Կաղզուան, փետրվարի 23-ին

Փետրվարի 20-ին տեղի ունեցաւ պարահանդէս յօգուտ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի՝ նախկին հայոց եկեղեցական-ծխական դպրոցի դահլիճում: Ընդհանուր մուտք եղաւ՝ տոմսակների վաճառումից 117 ր. 30 կ., բուֆէտից 33 ր. 25 կ., ընդամենը 150 ր. 55 կ. ծախս եղաւ 65 ր. 70 կ.: մնում է զուտ արդիւնք 85 րուբլի 85 կօպէկ: Վարչութիւնն իր խորին շնորհակալութիւնն է

չէր լսում, միայն անխաղձ աչքով նրա երեսին էր նայում: «Է՛հ, քո բուրբ, մտածում էր նա—բայց որտեղից գտնեմ այդ հինգ րուբլին, էլ ինչ է մնացել, որ ինչ ծախեմ. ամբարտաւ ցորեն չը կայ, տանս աւելորդ մի բան չը կայ, գոմուս անասուն չը կայ...»

—Ուրեմն հասկացնեմ, ինչ որ ասացի, շարունակեց բռնիկը. հա, ես մտածեցայ ամենապիտանի: Նախ և առաջ հարկաւոր է այս խողի ընդհանրներին փոխադրել չոր և մաքուր սենեակներ, հասկանում ես, անպատճառ:

Բռնիկը վերջին առաջարկութեան վրա Միսասը հեղծօրէն մպտաց և գլխով բացասական նշան արեց, որով ուղում էր ասել, թէ դա անհնարին է:

—Ի՞նչ ես սեպեղ բաց անում, աւանակ,—բղաւեց բռնիկը, բարկութիւնից ամբողջապէս կարմրեցնակելով և թուրը չորս կողմ ցանելով.—եւ քեզ ասում եմ, որ սրանք (նա ձեռքը մեկնեց դէպի հիւանդները) բոլորն էլ տաւ օրվայ ընթացքում տաւարի պէս կը ջարդվեն, եթէ առաջվայ պէս կը շարունակէ պահել և իմ պատուէրները չէ կատարի:

Ասաց և արագ-արագ դուրս եկաւ տանից: Պատճառ ջուխտ ձեռքով ծնկներին խփեց, երեսի վրա ընկաւ և բայթիլ սկսեց:

Միսասը մի քանի րօպէ մնաց մէջքը սիւնին տուած անշարժ կանգնած՝ տխուր մտածութեանը ներքի մէջ թաղված: Յետոյ նա հանեց գրպանից

յայտնում այն անձանց, որոնք նպատակեին պահանջել սի աջողութեան:

Նախագահ՝ Ստեփան Ջանփոլադեան
Քարտուղար՝ Ա. Մանուկ-Գրիգորեան

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան միստրի կովկասեան լիազօրի նախագահութեամբ գործող յատուկ յանձնաժողովը, որ միջակում է Պարսիկ ցուցահանդէսին մասնակցելու ծրագրեր, իր առաջին նիստում որոշել է կաղմել մի շարք հաւաքածուներ, բարտէսներ և աղիւսակներ, որոնց միջոցով կարելի կը լինի հազարու գաղափար տալ Կովկասի արդիւնաբերական հարստութեան մասին: Հաւաքածուների մէջ պէտք է լինեն հացահատիկներ, բամբակ, ծխախոտ, շատ մրգեր, բրդի և ուրիշ մթերքների տեսակների նմուշներ: Քարտէզները պէտք է պատկերացնեն Կովկասի անասնաբան հարստութիւնը, ընդարձակ արօտները, կլիմայական գոտիները, արդիւնաբերութեան գրութիւնը, վայրենի և տնային կենդանիների բուսած տարածութիւնը: Աղիւսակները, թւերի և գծերի միջոցով պէտք է գաղափար տան արդիւնաբերութեան ներկայ վիճակի մասին:

Եւրօպական մի թղթակից Վանից հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում. «Վանի վիլայէթում սով է. ամեն կողմից լսվում են յուսահատ, արիւնք աղաղակներ. գիւղացիները վազում են քաղաք օգնութիւն աղաղակելով: Այս տարի սովից տանջվում են միայն քրիստոնեաները—հայերը և ասորիները, որովհետև նրանց մէջ ապրող բնիկները ապրելու միջոցներ ունեն: Երբ տարի առաջ Վանի վիլայէթը 140—150,000 հայ բնակիչ ունէր. հաւանական է, որ մօտ 40,000 հոգի ոչնչացել են կամ կոտորվելով, կամ տիֆ հիւանդութիւնից ընկճվելով, որովհետև Պարսկաստան և Ռուսաստան փայտած գաղթականները, որոնք վերջերս վերադարձան, դուր որոնեցին մի տեղ, ուր կարողանային դնել իրանց գլուխը և երկարվեցին ամենասաստիկ զրկանքներ: Այժմ մնում են մօտ 100,000 հայեր, որոնց միայն տարւոյ տկոյր կարող են մի կերպ իրանց պահել, որոնք 50,000 հոգի պէտք է ողորմութեամբ ապրեն»:

Թիֆլիսում կազմված ակցիօներական նախագործական ընկերութիւնը մարտի 3-ին ստացաւ Պետերբուրգից հեռագիր, որը յայտնում է ընկերութեան պաշտօնական հաստատութիւն ստանալու լուրը: Ինչպէս յայտնի է, այդ ընկերութիւնը ունի 2000 ակցիա, իւրաքանչիւրը 250 ռուբլիանոց, ընդամենը 500,000 ռուբլի արժուրութեան:

Թիւրքիայից եկած լուրերը հաղորդում են, որ հաւատարմութեան գլխաւոր շարժառիթը նիւթական հանգամանքներն են: Մի քանի տեղ հաւատարմութեան դիմողները, ստանալով նրա պատմութիւնը իրանց հաւատակցիցներից, վերստին դարձել են մայր եկեղեցու գիրկը: Ամօթ է մի ժողովրդի համար այդպէս առուուտուր սկսել իր հաւատի վերաբերութեամբ. աւելի ևս ամօթ է այդ

մայրիկի տուրակը, մի հաստ պապիրոս փաթեթից, վառեց և սկսեց ազատութեամբ կուլ տալ դառը ծուխի բուրանը: Նա ծիւղում էր և մտածում. «Ե՛հ, Աստուած, ինչ անհասկացող անիրաւ էր այդ մարդը... Բայց դեռ անունն էլ ուսումնական բռնիկ է դրեց... Լաւ, էդ որ յիմարը չի հասկանում, թէ ճուտ ու գառն միւսը լրբուց ու քեղից լաւ է, որ բարձր ու մաքուր սենեակները մրտ հաղաւտանից լաւ են: Աշխարհիս երեսին շատ ու շատ լաւ բանեք կան, բայց ով մեզ կը տայ... Չունիս՝—առ, ասում է. էլ չէ հարցնում, թէ ինչով. էլ չէ ուղում իմանալ, որ տանս չորքոտանին կատուն է մնում, որ աղիւզ հիւանդներս մնացել են չոր խոտի վրա պառկած, որ ալիւրը փեթակի տակին է հասել և բացի դրանից, պարտքատէքն էլ օրական դուռն կտրում, զգիս չորում...»

Միսասը փաթեթից երկրորդ պապիրոսը: Հիւանդ աղջկանցից մինը դժուարութեամբ շրջվեց մէջքի վրա, խոր ընկած աչքերը գոռով բաց արեց, հայեացքը ուղղեց սև առաստաղին և հազիւ լսելի ձայնով զօրու արտաստանեց: Միսասը պապիրոսը գետնին դրեց, վերցրեց կաւե ամսնով ըտրուտ վրա դրված ջուրը և հիւանդի պապակված շրթներին մօտեցրեց:

Ա. Մանուկ-Գրիգորեան

Կողբ

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.